Ողջու՛յն,

Քեզ այս նամակը գրում եմ կրակի հայրենիք, նավթային երկրից՝ գեղեցիկ Ադրբեջանից: Ճիշտն ասած՝ այս նամակը գրելն ինձ համար և՛ դժվար է, և՛ խորհելու տեղիք է տալիս: Առաջին անգամ է, որ խաղաղության (շարժառիթ) մասին նամակ եմ գրում:

Յուրաքանչյուրի համար խաղաղությունը տարբեր նշանակություն ունի: Իմ կարծիքով՝ խաղաղությունը մարդկանց միջև համերաշխության հաստատումն է, անվտանգությունը, զարգացումը, բարգավաճումն ու ազատությունը: Այնտեղ, որտեղ կա նավթ, որտեղ առկա են հակամարտություններ և մարդիկ ապրում են պատերազմական իրավիճակում, այդտեղ կա՛մ նման հասկացություններ չկան կա՛մ էլ կիսատ են արտացոլված: Բոլորին հայտնի է մեր երկրների միջև առկա հակամարտությունը, պատմության ընթացքը և այսօրվա իրականությունը: Անմեղ կոտորածներ, սպանդ, անթիվ–անհամար կորուստներ ու ավերումներ, իրենց բնօրրանից արտաքսված քաղաքացիներ, արցունքներ, թախիծ ու ցավ:

Այս ամենը սարսափելի է, այնպես չէ՞: Գուցե սարսափը տեսածների տեսանկյունից անընդունելի է, որ այդ ողբերգությունն ապրած Ադրբեջանն այսօր բանակցում է խաղաղության շուրջ: Սակայն ես ցանկանում եմ, որ առանց պատմության կրկնության, առանց նույն ողբերգությունը ապրելու ավարտվի Լեռնային Ղարաբաղի խնդիրն ու ժողովուրդների միջև թշնամանքը: Ուզում եմ, որ սոցիալական ցանցերում այլևս չլինի ատելության խոսք ու անտեղի մեղադրանքներ: Ուզում եմ, որ այսօր մեր երկրներում պատերազմին, բանակին հատկացվող միջոցները հատկացվեն կրթությանը, առողջապահությանն ու մնացած այն ոլորտներին, որոնք սպասում են իրենց զարգացմանը: Բարձրացնե՛նք համերաշխության ու հանդուրժողականության մակարդակը: Ես ուզում եմ, որ Ադրբեջանի քաղաքացին փոխադարձաբար Հայաստանի քաղաքացու կողքին զգա իրեն անվտանգ ու հանգիստ, ինչպես մյուս երկրների քաղաքացիների դեպքում է: Ուզում եմ, որ շատերի կողմից ուտոպիստական վերաբերմունքի արժանացած խաղաղություն հասկացությունն ու արդարությունը իրականություն դառնան: Որպես սոցիալական աշխատանք կատարող ուսանող՝ բարձր եմ գնահատում մարդասիրության ու խաղաղության գաղափարախոսությունը և ձեզ խաղաղության կոչ եմ անում, այլ ոչ թե ատելության:

Սադեթ